ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Շ. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Արդի էկոլոգիական իրադրությունը և հասարակական սիստեմները. *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977, 125 էջ։*

Շրջապատող միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում ձեռք են բերել առաջնահերթ նշանակություն։ Այդ հրատապ պրոբլեմների նկատմամբ կուսակցության հոգատարությունն արտացոլվել է նրա Ծրագրում, ՍՄԿԿ XXIV և XXV համագումարների որոշումներում, ինչպես նաև ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ, որտեղ ասված է. «Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից, ՍՍՀՄ-ում անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում հողի ու նրա ընդերքի, ջրային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի պահպանման և գիտականորեն հիմնավորված, ռացիոնալ օգտագործման համար, օդի և ջրի մաքրության պահպանման, բնական հարստությունների վերարտադրության ապահովման և մարդու շրջակա միջավայրի բարելավման համար» (հոդված 18)։ Ուստի միանգամայն բնական է, որ արդի էկոլոգիական իրադրության պատճառների և հետևանքների ուսումնասիրությունը դարձել է մարքս-լենինյան փիլիսոփայության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկը։

Վերջին տարիներս մեր երկրում էկոլոգիական պրոբլեմատիկան ուսումնասիրվում է ամենատարբեր տեսանկյուններով։ Սակայն նրա սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունը, ներառյալ արդի էկոլոգիական իրադրության ծագումը, որպես մարդու վերափոխիչ գործունեության հետևանք, անբավարար է ուսումնասիրված։ Այդ իսկ պատճառով ուշագրավ է Շ. Մարտիրոսյանի «Արդի էկոլոգիական իրադրությունը և հասարակական սիստեմները» աշխատությունը, որտեղ էկոլոգիական իրադրությունը քննվում է բնական միջավայրի վերափոխմանն ուղղված մարդկային գործունեության ընդլայնման և խորացման պատմական միտումների վերլուծության հիման վրա։ Մարդու վերափոխիչ գործունեության խորացումը բնական միջավայրի համապարփակ ապականման պրոբլեմի առաջացման տեխնոլոգիական հիմքն է։ Այդ գործունեության ընդլայնումն իր հերթին առաջ է բերում բնական միջավայրում, երկրի կենսոլորտում էկոլոգիական հավասարակշռության խախտում։ Գրախոսվող գրքում ուսումնասիրված է նաև բնական ռեսուրսների պրոբլեմը։ Հեղինակի մեկնաբանությամբ, վերջինս ծագում է այն ժամանակ, երբ մարդու և հասարակության աճող պահանջմունքների բավարարման պատճառով առաջանում է բնական հարստությունների սպառման իրական վտանգ։ Մյուս կողմից, բնական ռեսուրսների սպառում տեղի է ունենում դրանց ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով։

Էկոլոգիական պրոբլեմների ծագման ու լուծման մեջ արդի գիտատեխնիկական հեղափոխության տեղի և դերի պարզումը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական խոշոր նշանակություն։ Հեղինակն իրավացի է, պնդելով, որ գիտատեխնիկական հեղափոխությունը ոչ այնքան առաջացնում է բացասական էկոլոգիական հետևանքներ, որքան նպաստում է բնության պահպանման պրոբլեմների կոմպլեքսային լուծմանը։ Այդ կապակցությամբ Շ. Մարտիրոսյանը նշում է, որ միայն ժամանակակից գիտատեխնիկական նվաճումների հիման վրա է հնարավոր էկոլոգիական պրոբլեմի լուծման տեխնոլոգիական նախադրյալների ստեղծումը։ Աշխատության մեջ բերված տվյալները ցույց են տալիս, թե գիտատեխնիկական նվաճումները ինչպես են նպաստում մարդկային գործունեության բացասական հետևանքների կանխմանը։

Հասարակության զարգացման արդի փուլում սոցիալ-էկոլոգիական բնույթ են ստանում նաև մարդու՝ շրջապատող միջավայրի վերափոխմանն ուղղված գործունեության կողմնակի և միջնորդավորված հետևանքները։ Ուստի, միանգամայն օրինաչափ է մարդու գործունեության գնահատման համակարգի փոփոխման մասին հեղինակի հարցադրումը։ Ընդ որում, նրա եզրակացությունն այն է, որ այժմ գործունեության գնահատման համար բավական չէ հիմնվել միայն նպատակահարմարության սկզբունքի վրա, այսինքն՝ ելնել անմիջական, ցանկալի արդյունքների ապահովման պահանջներից։ Մարդու նպատակների իրականացմամբ պայմանավորված բա-

ցասական հետևանքները ևս պետք է ներառվեն կոնկրետ գործունեության գնահատման համակարգի մեջ։

Վերլուծելով արդի էկոլոգիական իրադրության սոցիալ-տնտեսական տեսանկյունները, Շ. Մարտիրոսյանը ցույց է տալիս էկոլոգիական խնդիրների լուծման մեջ զարգացած սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ և թվարկում է դրանք։ Դրանցից կարևորագույնը արտադրության միջոցների հանրային սեփականությունն է, որը թույլ է տալիս ապահովել հասարակական շահերի առաջնությունն անձնականի նկատմամբ։

Գրախոսվող գրքի արժանիքներից է և այն, որ հեղինակը ոչ միայն ընդգծում է այդ դրույթը, այլև առանձնացնում է զարգացած սոցիալիզմի կոնկրետ առավելությունները, որոնք տարբեր ընգավառներում վերջին հաշվով ապահովում են հասարակական շահի առաջնությունն անձնականի հանդեպ։ Հեղինակը այդ առավելությունների շարքում է դասում ժողովրդական անտեսության պլանավորումը, բնության պահպանության սոցիալիստական օրենդրությունը, նոր մարդու էկոլոգիական դաստիարակությունը, սոցիալիստական ինտեգրացիան և այլն։

Ուշագրավ է այն, որ հեղինակը սոցիալիզմի կոնկրետ առավելությունների շարքում ներառնում է նաև սոցիալիստական ինտեգրացիան, որի շրջանակներում Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների պլանային համագործակցությունը նաև էկոլոգիական համագործակցության հիմքն է։ Դա կապիտալիզմի հանդեպ սոցիալիզմի առավելությունների ապացույցն է միջպետական մակարդակում։

Գրքում Սովետական Հայաստանի օրինակով ցույց է տրված, թե ինչպես է կենսագործվում ՍՄԿԿ XXV համագումարի մշակած էկոլոգիական քաղաքականությունը։ Մեծ ուշադրություն է դարձվում Սևանի պահպանության պրոբլեմին։ Ընդ որում, առաջ են քաշված լճի էկոլոգիական միջավայրի պահպանման և վերարտադրության հարցերի կոմպլեքսային լուծմանն ուղղված առաջարկություններ։

Աշխատությունն ավարտվում է կապիտալիստական արտադրաեղանակի և էկոլոգիական պրոբլեմատիկայի փոխհարաբերության վերլուծությամբ։ Հեղինակի եզրակացությունն այն է, որ սոցիալ-տնտեսական տեսանկյունից իր դարն ապրած կապիտալիզմն իրեն սպառել է նաև էկոլոգիական տեսանկյունից։ Նույնիսկ բուրժուական գիտնականներն ստիպված են ընդունել բնական միջավայրի ապականման սոցիալական բնույթը, մի ապականում, որը կապիտալիստական երկրներում դարձել է իսկական ազգային ողբերգություն։

Էկոլոգիական պրոբլեմատիկայի գաղափարախոսական տեսանկյունների հարցը սովետական սոցիալ-փիլիսոփայական գրականության մեջ բավարար է ուսումնասիրված։ Այդուհանդերձ, Շ. Մարտիրոսյանը կարողացել է տվյալ պրոբլեմին մոտենալ յուրովի՝ առանձնացնելով և քննելով սոցիալիզմի դեմ կապիտալիզմի ջատագովների ձեռնարկած գաղափարական դիվերսիաների տակտիկական և ստրատեգիական նպատակները։ Հեղինակի կարծիքով, այդ դիվերսիաների տակտիկական նպատակն է ապացուցել, թե, իբր, էկոլոգիական պրոբլեմների լուծման ասպարեզում սոցիալիզմը կապիտալիզմի հանդեպ առավելություններ չունի և որ բացասական հետևանքների առաջացման մեջ սոցիալիզմը նույնպես մեղավոր է։ Բուրժուազիայի գաղափարախոսական գործունեության ստրատեգիական նպատակն է ցույց տալ, թե, իբր, ժամանակակից կապիտալիզմը հնարավորություն ունի լուծելու ոչ միայն արդիական, այլև պոտենցիալ էկոլոգիական պրոբլեմները։ Սակայն, ինչպես ճիշտ նկատել է Շ. Մարտիրոսյանը, կապիտալիզմի ջատագովների բոլոր այդ փորձերը օբյեկտիվորեն դատապարտված են ձախողման, քանի որ միայն սոցիալիզմն է ընդունակ լուծելու էկոլոգիական պրոբլեմները։

Գրախոսվող աշխատությունն իր բոլոր արժանիքներով հանդերձ ունի որոշ թերություններ։ Այսպես, օրինակ, նրանում, Հայկական ՍՍՀ օրինակով, ապականումից բնական միջավայրի պահպանման հարցերը սպառիչ չեն լուսաբանված։

Չնայած նշված և մասնակի այլ թերություններին, Շ. Մարտիրոսյանի աշխատությունը լուրջ գիտական ուսումնասիրություն է։ Այն արդի էկոլոգիական իրադրության պրոբլեմների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը նվիրված հայերեն առաջին գիրքն է։

ՌՈԲԵՐՏ ԱՎԱԳՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու